



Օ Ր Ա Գ Ի Ր

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն , Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն , Տ Ա Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Ե Ի

Բ Ա Ն Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ե Ա Յ

Ե • Տ Ա Ր Ի , Թ Ի Ի 24 .

1847

Գ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 15 .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Գ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տառը փաստ-երկու- փարեկան փղոց արփաչին կընու-լեանը վրայ :

Տ Ա Ս տասուերկու տարեկան տղայ մը ըստ Ալերոպացւոց թէ որ մարդա-վարու թեան սկզբունքը չգիտնայ՝ մեծ ամօթ կը սեպուի ոչ միայն տըղուն , այլ և իրեն ծնողացը . անոր համար տղան ընդու ելլելուն պէս՝ մայրը կը սկսի քաղաքավարութե վայել խիստ հարկաւոր բաները սորվեցընել . անանկ որ վեց եօթը տարեկան տղայ մը շատ աղէկ գիտէ թէ մեծին առջև ինչպէս շարժելու է , ինչպէս բարև առնելու տալու է , ինչպէս պատասխան տալու է շնորհակալ ըլլալու կամ բան մը խնդրելու է : Ամանապէս տաս տասուերկու տարեկան տըղան սեղանի վրայ , բարեկամի տուն կամ զբօսանքի ատեն աղէկ վարուելուն կերպը շատ աղէկ առած է , և ինչուան պատուաւոր ընկերութեանց մէջ ալ կը մտնէ , որով շատ բան ալ գիտելով ու տեսնելով կը սորվի :

Թի որ կըթու թեան համը առած արևելցի մը աղէկ կըթուած եւրոպա-

ցի տղու մը հետ խօսելու ըլլայ , կը սքանչանայ անոր կարգաւորեալ խօսակցութեանը ու կերպին վրայ , և իրաւացի եռանդով մը վառուած կը փափաքի որ իր ազգին տղաքն ալ այնպիսի գեղեցիկ կըթու թիւն մը առնեն , և իրենց մատղաշ տարիքէն իմանան թէ ինչ ըսել է մարդ ըլլալ ու մարդու հետ վարուիլ : Ինչհակառակն թէ որ գլուխը նախապաշարմունքներով լեցուն մարդ մը ըլլայ ըսած արևելցիս , նոյն տղուն այնպէս կարգաւորեալ պատասխան տալը ու առնելը յանդգնութիւն կը սեպէ ու կ'արհամարհէ . վասն զի արևելք թէ որ տղու մը բան մը հարցընես՝ պատասխանն է՝ գլուխը կախած կուրծքին վրայ նայիլ կամ ձեռքով երեսը ծածկած՝ քթին տակէն խնամընտալ : Իսանկ բաները մարդկութեան զէմբաներ են , և արևելցիք զտղաքը ինչուան տասուիրեք տամընչորս տարի մարդու տեղ չղնելով՝ անոնց մեծա-

մեծ վնասներ ըրած կ'ըլլան , վասն զի ան միջոցին որ եւրոպացւոց տղաքը հարկաւոր եղած կրթութիւնը և ուսմունքը սորված են , մերինները հազիւ սկսելու վրայ են :

Յիրաւի հիմա նախապաշարեալներուն թիւը քիչցած է , և մեր տղոց վրայ ալ ան բունութենէ առաջ եկած վախը քիչ կայ , բայց ինչ օգուտ որ աս համարձակութիւնը աւելի յանկարծական ազատութե մը հետեանք է , քան թէ աղէկ կրթութեան պատուղ , որով ինչուան որ մայրերը տան մէջ տղոց կրթութիւն չսկսին տալ անոնց պզտի տարիքէն , մեր ազգը չկրնար եւրոպական ազգաց պէս բարեկիրթ ըլլալ : Արնայ մէկը բսել թէ ինչպէս կրնան մայրերը իրենց տղոցը կրթութեանը պարապիլ՝ երբ որ իրենք պզտիկուց դպրատանց մէջ կրթութիւն առած չեն : Արաւ է որ ինչուան աղջկանց դպրոցներ չբացուին մեր ազգին մէջ , չենք կրնար մեր փափաքին հասնիլ ինչպէս որ պէտք է . բայց կան այնպիսի բնական բաներ ալ որ ամէն ծնողք գիտեն կամ կրնան գիտնալ . զոր օրինակ մաքրութիւնը ոչ միայն առողջութեան մասն է՝ հապա նաև քաղաքավարութեան . արևելք և արևմուտք գիտեն ծնողք աղտոտութեան ինչ գէշ բան ըլլալը , սակայն կը նայիս որ Աւրոպացիք մեծ հոգ ունին իրենց զաւկրներուն մաքրութեանը վրայ , իսկ մեր արևելեայք անհոգ են աս բանիս . թէպէտ և հասակաւոր անձինք բաղնիք ստէպ կ'երթան ու կը մաքրուին : Տղոց փողոցներու մէջ խեռութիւն ընելը և գէշ ընկերաց հետ խաղալը ո՞վ չի գիտեր թէ խիստ վնասակար բան է . սակայն շատ ծնողք անհոգութեամբ կը թողուն զաւկրնին որ երթայ փողոցներու մէջ իրեն պատուական օրերը անցընէ , ապագայ երջանկութիւնը և պատիւը փձացընելով : Ար մայրը արևելք երես տալուն վտանգաւոր բան ըլլալը չի գիտեր . սակայն չեն դազրիբ ամէն օր տղոց երեսն 'ի վեր ծիծա-

ղելէն , ինչուան որ տղան գլուխնին ելլէ . ոմանք ալ ասոր ներհակ՝ դահճի պէս կը վարուին զաւկրներնուն հետ . ալ լաւ չէ՞ վայելուչ քաղցրութիւն ու սատկութիւն մը բանեցընելով ըստ տեղոյն՝ տղան մարդու տեղ գնել ու մարդկութեան ճամբան բերել :

Այ ընդհանուր սկզբունքները որ երբեմն երբեմն կը գնենք ( Նազմավիպիս մէջ՝ մարց եռանդը վառ պահելու համար է , որ հիմակուրնէ մասնաւոր ջանք ընեն իրենց օրգւոցը կրթութեանը , որպէս զի նոր ծննդոց վրայ երևնայ դաստիարակութեան պտուղը . վասն զի թէ որ աղջկանց դպրոցներուն բացուելուն սպասենք՝ գոնէ քսան տարի պէտք է որ իրենց մօրերէն լաւ կրթեալ տղաք տեսնենք : Ինչպէս որ ազգին մեծ մասը ուսմունքները և ճարտարութիւնները առաջ տանելու համար ջանք կը ցուցընէ , հարկ է որ մարք ալ իրենց զաւակացը կրթութեանը ջանան , և գիտնան որ ասկէ արդիւնաւոր ու վսեմ բան չեն կրնան ընել . վասն զի ազգի մը փառաց ու երջանկութեան պատճառը , ինչպէս նաև անոր թշուառութեան ու անպատուութեանը՝ ծնողք են իրենց տուած աղէկ կամ գէշ դաստիարակութեամբը :

Հ . Տ . Թ

ԱՅԼԱՅԱՆՈՒԹԻՒՆ  
—  
Մտանչ :

Մեր ճամբան բոլոր ծաղկրներով զարգարած էր . անոնց վրայ կոխելով գնացինք հասանք սոսկալի ժայռի մը տակ . հան դիմացնիս մութ այր մը ելաւ . մտանք ներս , կարծէինք որ մէջը ագամորդի մը կը գտնուի : Մէյ մըն ալ ինչ կը տեսնես : Ոտքս դռնէն ներս գնելուս պէս՝ բոլոր մարմինս